Ես բաց արի այն փոքրիկ արկղիկը, որը հիւանդը ցոյց տոեց իր հոգեվարքի միջոցին: Նա լիքն էր զանազան հին, ցեց կերած թերթերով, որոնք գրուած էին պարսից, արաբացոց, յունաց, թուրքաց եւ հայոց լեզուներով: Նրանց վրայ դրոշմուած էին մեծ եւ փոքր կնիքներ: Մագաղաթի գրուածքը դարերի ընթացքում բոլորովին գունատոել եւ մուգ-դեղին գոյն էր ստացել: Կարօն խլեց իմ ձեռքից հրովարտակները եւ բոլորը միասին նետեց հնոցի մէջ: Կրակը բորբոքոեց, եւ Ղարա-Մելիքների աւելի քան հազար տարոայ տոհմային վկայականները մոխիր դարձան:

— Ինձ պէտք չէ արտօնական իշխանութիւնը, որ իբրեւ ողորմութիւն շնորհուած է եղել իմ պապերին, — ասաց Կարօն խորին վրդովմունքով: — Ես պիտի աշխատեմ չսովորել մուրացկանութիւն: Եթէ կը յաջողի ինձ կրկին ձեռք բերել այն, ինչ որ կորցրել են իմ նախնիքը, — այդ պէտք է լինի իմ սեփական ջանքով: Սրով, բռնի ուժով խլածը պէտք է սրով վերադարձնել: Բայց ինչ որ ամենաթանկագինն է ինձ համար, — դա է իմ ծնողների արիւնը: — Ահա՛ ամենագլխաւոր պահանջը, որ պիտի տուժել տամ մեր թշնամիներին...

Այդ խօսքերը զարթեցրին իմ յիմար գլխում մի միտք, որ մինչեւ այն որոպէն մնացել էր խուլ, անշարժ, անկերպարան: Միթէ՞ իմ հօր արիւնը նոյնպէս չէր բողոքում արդարութեան ատեանի առջեւ, միթէ՞ նա գերեզմանից չէր կոչում որդուն վրէժխնդիր լինել: Թուրքը թուրքի հետ գրազ եկաւ եւ իր սրի զօրութիւնը փորձելու համար, մի հարուածով կտրեց իմ հօր պարանոցը եւ ստացաւ մի ֆինջան ղահոէ... Որքա՜ն նախատինք, որքա՜ն ցածութիւն էր այդ, իր կեանքով լինել առարկայ մի այդպիսի բարբարոսական կատակի...

Հնոցի մէջ մագաղաթը դեռ այրւում էր. կապտագոյն բոցերը դեռ պլպլում էին:

— Տե՛ս, այլեւս ի՞նչ կայ այնտեղ, — հարցրեց Կարօն, ցոյց տալով սնդուկը:

Յատակի վրայ մնացել էր փղոսկրեայ մի տուփ. ես բաց արի տուփը. նրա մէջ դրած էր մի փոքրիկ մեդալիոն, ոսկուց շինած եւ ադամանդներով զարդարած, որի վրայ հմուտ ճարտարութեամբ նկարուած էր մի գեղեցիկ կանացի գլուխ: Այդ Կարօյի մօր պատկերն էր: Նա առեց իմ ձեռքից մեդալիոնը, մի քանի վայրկեան նայեց նրա վրայ, յետոյ թաքցրեց իր ծոցում: Այն ժամանակ միայն նկատեցի՝ նրա աչքերից գլորոեցան մի քանի կաթիլ արտասուք գունաթափ, տխուր դէմքի վրայ: